ԸՆԴԴԻՄԱԽՈՍԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Հասմիկ Սամվելի Հովհաննիսյանի «Բյուզանդական X-XI դարերի պոնձե դրամները և դրանց շրջանառությունը Հայաստանում» Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Միջնադարյան Հայաստանի դրամաշրջանառության, դրամական տնտեսության ուսումնասիրությունն այսօր առանձնակի հետաքրքրություն ունի, որը կարող է նոր բացահայտումներ անել Հայաստանի՝ որպես տարածաշրջանի կարևոր ռազմավարական, առևտրատնտեսական նշանակություն ունեցող երկրի պատմության բազմաթիվ խրթին՝ այլ աղբյուրներում տեղ չգտած խնդիրները լուսաբանելու հարցում: Դրամի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի օբյեկտիվ գիտական մեկնաբանություններ անել, քանի որ այն ամփոփում է իր մեջ առավել ճշգրիտ տեղեկատվություն, քան գրավոր այլ աղբյուրները:

Թեմայի ուսումնասիրության միջոցով Հ. Հովհաննիսյանը փորձել է ներկայացնել միջնադարյան Հայաստանի դրամաշրջանառության մի այնպիսի կարևոր հատված, ինչպիսին X դարի վերջից XIII դարի սկիզբն ընկած ժամանակահատվածն է, որն իր հերթին բաժանվում է մի քանի փուլի՝ պայմանավորված Հայաստանում և ողջ տարածաշրջանում ընթացող գործընթացներով:

Աշխատանքի ներածության մեջ հեղինակը ներկայացնում է նպատակը, մեթոդաբանությունը, արդիականությունը, համառոտ բնութագրում է թեմային առնչվող դրամագիտական հիմնախնդիրները: Ներկայացված է ուսումնասիրության պատմությունը, անդրադարձ է արվել նաև աղբյուրների քննությանը, որից պարզ երևում է նրա քաջատեղյակությունը՝ դրամագիտության այդ ոլորտում առկա հետազոտական դաշտին:

Առաջ քաշած հիմնախնդիրները, սակայն, այնքան խորքային են, որ ուսումնասիրել դրանք, հենվելով միայն պատմիչների գրավոր տեղեկությունների վրա, հնարավոր չէ: Հնագիտությունն է, որ առավել, քան որևէ այլ պատմական գիտություն, հնարավորություն է տալիս ընդլայնել դրամների քննության շրջանակները, հատկապես ուսումնասիրելու երկրի առևտրատնտեսական հարաբերությունների կարևորագույն ոլորտներից մեկը՝ դրամաշրջանառությունը: Հաճախ, անձամբ մասնակցությունը հնագիտական պեղումներին, շերտերի բացումը՝ անգամ ոչ մեծ թվով գտածոների պայմաններում,

հնարավորություն է տալիս կարևոր բացահայտումներ անել, ինչը որ հիանալի ձևով հաջողվել է ատենախոսին՝ ով անձամբ մասնակցել է մի շարք հնավայրերի պեղումներին և, անգամ, Ծաղկաձորի միջնադարյան ամրոցի պեղումների ժամանակ in situ բացել է բյուզանդական դրամների անխաթար գանձ:

Աշխատանքի առաջին գլխում Հասմիկ Հովհաննիսյանը քննում է 969-1092 թվականներին թողարկված բյուզանդական պղնձե դրամների տիպաբանական հարցեր, որոնց հիման վրա ճշտումներ է մտցրել առանձին խմբերի թվագրման և դրանց իդենտիֆիկացման մեջ: Այն բաժանված է հինգ ենթագլխի, որտեղ չորրորդ ենթագլուխն՝ իր հերթին բաղկացած է երեք բաժնից: Առաջին ենթագլխում նա տալիս է բյուզանդական պղնձե դրամների համառոտ բնութագիրը, փուլային փոփոխությունները, դրանց տեղը դրամական տնտեսության մեջ: Սա շատ կարևոր է հասկանալու համար, թե ինչու՞ է հեղինակը կանգ առել հատկապես պղնձե դրամների վրա, որոնք չեն կապվում միայն ներքին առևտրի հետ, այլ Բյուզանդիայի դեպքում, լայն շրջանառություն են ունեցել միջազգային շուկայում, ինչպես նաև եղել են բանակին վճարելու միջոց: Ամենաբարդ խնդիրներից է տարանջատել՝ թե ո՞ր դեպքում են դրանք կիրառվել բանակի համար և ե՞րբ են հանդիսացել որպես վճարման միջոց՝ զարգացած ներքին շուկայի պայմաններում: Հատկապես հնագիտական տվյալների կիրառումը պատմական համատեքստում նրան հնարավորություն է ընձեռել տալ բյուզանդական դրամների շրջանառության փուլային այդ տարբերությունը:

Երկրորդ ենթագլխում նա անդրադառնում է այսպես կոչված «անանուն ֆոլիսների» ի հայտ գալու նախադրյալներին և թողարկման սկզբնական փուլին՝ դրամներ, որոնք ամենամեծ խումբն են կազմում Հայաստանից հայտնաբերվող բյուզանդական թողարկումներում: Հ. Հովհաննիսյանը, հենվելով աղբյուրագիտական հսկայական նյութի վրա, համոզիչ կերպով հիմնավորել է «անանուն ֆոլիսների» շրջանառության մեջ մտցնելու քաղաքական, գաղափարախոսական, ռազմավարական նախադրյալները, ներկայացրել է տարածաշրջանում ստեղծված նոր տնտեսական իրավիճակը՝ պայմանավորված առևտրի աննախադեպ աճով և ծրագրերով՝ արաբներից հետ խլած տարածքները նորից վերադարձնելու կայսրության դրամական քաղաքականության ոլորտ:

Երրորդ ենթագլխում Հ. Հովհաննիսյանը մանրամասն քննում է «անանուն ֆոլիսների»՝ տարբեր հեղինակների կողմից ներկայացվող տիպաբանությունը, որը

ճանապարհ է բացում՝ հասկանալու բոլոր այն բարդ խնդիրները, անհամապատասխանությունները, գիտական բացը, որոնք առկա են այս բնագավառում: Կայսրերի պատկերների և անունների բացակայությունը դրանց վրա պատճառ է հանդիսացել այս խմբի տարբեր տիպերի բազմազան վերագրումների, թվագրումների: Ուստի դրանց մեջ արվող յուրաքանչյուր ճշգրտում ունի բացառիկ գիտական նշանակություն ոչ միայն դրամագիտության, այլև այլ ոլորտների համար՝ քաղաքական պատմություն, հնագիտություն, արվեստաբանություն, աղբյուրագիտություն և այլն:

Չորրորդ ենթագլխում Հ. Հովհաննիսյանը տիպաբանական հարցերը քննելու իր մեթոդաբանությունն է առաջարկում՝ հենվելով ոչ միայն ոճաբանական, պատմական կամ զուտ դրամագիտական քննության վրա, այլ մեկտեղելով այս բոլորը, տալիս է առանձին տիպերի ավելի համոզիչ ժամանակագրական և վերագրման հայեցակարգ՝ չվախենալով հանդես գալ որպես բյուզանդական դրամագիտության հեղինակավոր ներկայացուցիչների ընդդիմախոս: Այս խրթին թեմայի նման բազմակողմանի մեթոդաբանական ուսումնասիրություն առաջին անգամ է արվում: Մանրամասն զննելով «մաքուր» հատաձույլի վրա արված թողարկումները՝ նաև հատման կնիքների համեմատության եղանակով, վերաթողարկումները (հատված դրամի վրա այլ կնիքով նոր դրոշմվածք, որի վրա պահպանված են «հին» թողարկման հետքերը), նա ճշգրտում է մտցնում որոշ տիպերի վերագրման մեջ, մասնավորապես F տիպը կապելով ոչ թե Միքայել VI-ի, ինչպես ներկայացվում է բյուզանդական դրամագիտության մեջ, այլ Իսահակ I-ի հետ, որը մեզ թվում է լիովին հիմնավորված:

Չափազանց հետաքրքիր է 1.4.2 բաժինը, որտեղ Հ. Հովհաննիսյանը, հիանալի տիրապետելով բյուզանդական աղբյուրներին, այդ մշակույթի պատկերագրական կանոններին, դրամաթողարկման ավանդույթներին, առաջ է քաշում բոլորովին նոր վարկած Կոստանդին X-ի դրամների մասին, որոնք բավականին մեծ թիվ են կազմում Հայաստանի գտածոների մեջ: Եթե նախկին ուսումնասիրողները «անանուն ֆոլիսների» E, F դասերը վերագրում են Կոստանդին X–ին, ով ունի ֆոլիսներ իր անունով և պատկերով: Հ. Հովհաննիսյանի կարծիքով, Կոստանդինը թողարկել է միայն վերոհիշյալ իր պատկերով անվանակիր դրամները՝ փորձելով վերջ դնել իրենից առաջ շուրջ մեկ դար շրջանառվող «անանուն ֆոլիսներին»: Նույն ենթագլխում նա կարևոր տիպաբանական ճշգրտումներ է անում ուշ շրջանի «անանուն» դրամների մեջ: Նման մանրամասն քննությունը

ներկայացնում է Բյուզանդիայում XI դարի վերջում ստեղծված լուրջ դրամական ճգնաժամը, որն ի վերջո պետք է բերեր Ալեքսիոս I-ի դրամական 1092 թվականի բարեփոխմանը:

Նույն գլխի հինգերորդ ենթագլխում նա առանձին քննում է A դասի երկու ենթադասերի (A1, A2) «անանուն» ֆոլիսները, որոնք մեծաթիվ են և թողարկվել են առավել երկար, քան մյուս դասերը: A դասը բաժանվում է բազմաթիվ տարբերակների, որոնք դրամագետներն առանձնացրել են՝ ի նկատի ունենալով դրանց վրա եղած նշանների և մանրամասների փոփոխությունները: Ատենախոսին, մանրակրկիտ աշխատանքի արդյունքում, ՀՊԹ նյութի հիման վրա հաջողվել է հայտնաբերել A դասի հինգ նոր տարբերակ՝ ևս մեկ անգամ արժևորելով «հայկական» նյութի կարևորությունը բյուզանդական դրամների ուսումնասիրության մեջ:

Հեղինակը, քննելով «անանուն» ֆոլիսների ոճաբանական և կատարողական առանձնահատկությունները, չափագիտական տվյալները, մի շարք կարևոր ճշգրտումներ է մտցնում, որոնք հնարավորություն կտան նեղացնել առանձին խմբերի թվագրման շրջանակները՝ դառնալով նաև արժեքավոր «գործիք»՝ հնագիտական շերտերի առավել ստույգ թվագրման համար: Հ. Հովհաննիսյանը, քննելով Հայաստանի տարածքից հայտնաբերված զուտ բյուզանդական դրամներից բաղկացած զանձերը, ներկայացրել է A դասի բազմազան տարբերակների փուլային հաջորդականության և ժամանակագրական ճշգրտումների իր տեսակետները՝ հիմնավորելով դրանք պատմական աղբյուրներով:

Հասմիկ Հովհաննիսյանն ատենախոսության երկրորդ գլուխը նվիրել է քննվող ժամանակաշրջանի բյուզանդական դրամների պատկերագրությանը՝ մատուցելով դա պատմական կուռ համատեքստում, կենդանի ներկայացնելով X-XI դարերի կայսրերի քաղաքականությունը, որով էլ հաճախ պայմանավորված է եղել դրամի պատ-կերագրության փոփոխությունը: Առաջին ենթագլխում հեղինակը մանրամասն վերլուծում է դրամների պատկերագրությունը՝ համադրելով տարբեր կայսրերի ոսկե, արծաթե, պղնձե համաժամանակյա թողարկումները՝ հիմնավորելով իր առաջարկած տիպաբանական նորույթները: Երկրորդ ենթագլխում Հ. Հովհաննիսյանը, դրամագիտական հարցերի հետ միասին, ուսումնասիրել է Քրիստոսի, թվում է , թե ողջ պատկերագրությունը, որի հիման վրա արել է իր սեփական եզրահանգումները: Այստեղ հեղինակին օգնության են եկել նրա խորը արվեստաբանական գիտելիքները, որոնց միջոցով նա ցույց է տալիս Քրիստոսի

պատկերագրական էվոլյուցիան, առանձնահատկությունները, այդ տվյալները տեղադրելով դրամագիտական նյութի վրա: Դրա շնորհիվ նա կարողացել է հետաքրքիր լրացումներ անել բյուզանդական XI դարի դրամների մեկնաբանությունների և վերագրումների մեջ: Այս գլխում ակնառու են հեղինակի խորը գիտելիքները Բյուզանդիայի պատմության, արվեստի բնագավառում, որոնց հենքի վրա նա բացատրում է կայսրերի պատկերագրական նախապատվությունները, որոնք արտացոլվել են նրանց դրամների վրա:

Երրորդ գլխում Հ. Հովհաննիսյանն արդեն քննում է դրամաշրջանառության խնդիրները՝ հենվելով առաջին հերթին, Հայաստանից հայտնաբերված նյութի վրա: Ձեռքի տակ ունենալով, հատկապես Անի մայրաքաղաքի պեղումներով հայտնաբերված դրամագիտական գտածոները, որոնց զգալի մասը բյուզանդական դրամներ են, այդ թվում՝ դրանց ընդօրինակություններ և ֆոլիսներ՝ մահմեդական իշխանությունների մակադրոշմներով, նա լրացնում է հայոց մայրաքաղաքի տնտեսության մասին եղած պատկերը դրամագիտական ավելի մանրակրկիտ քննությամբ: Ճիշտ է, Խ. Մուշեղյանը անդրադարձել է Անիի դրամներին, բայց միայն ընդհանուր գծերով: Հ. Հովհաննիսյանի՝ որպես կայացած մասնագետի մասին է վկայում Անի մայրաքաղաքի դրամագիտական գտածոներին նվիրված նրա հետազոտությունը: Դրամների հայտնաբերման շատ հանգամանքներ անտեսվել են ուսումնասիրողների կողմից՝ համարվելով ոչ այնքան կարևոր, քանի որ միշտ ներկայացվել է քաղաքի դրամաշրջանառության միայն ընդհանուր պատկերը: Հ. Հովհաննիսյանը լիովին նոր մոտեցում է հանդես բերել Անիի դրամների ուսումնասիրությանը և դրանք քննել է՝ ելնելով գտածոների կոնկրետ տեղայնացման, դրանց շերտագրական տվյալների և ուղեկցող նյութի հետ համեմատության վրա: Այդ եղանակը ճանապարհ է բացում՝ ուսումնասիրելու և հստակեցնելու միջնադարյան քաղաքի դրամաշրջանառության փուլերը, դրամական տարբեր խմբերի տեղը առևտրատնտեսական հարաբերություններում: Տվյալ դեպքում առկա է ոչ միայն դրամների՝ որպես հնագիտական հարցերի պարզաբանման միջոցի կարևորությունը, այլև ընդհակառակը՝ թե որքան կարևոր է հնագիտական պեղումների արդյունքների ճշգրիտ ֆիքսումը, մասնավորապես դրամների հայտնաբերման ստույգ տեղագրության ամրագրումն ու ուղեկցող նյութի արձանագրումը, որն ընդլայնում է ուսումնասիրության հնարավորությունները՝ ներկայացնելու խոշոր քաղաքների տնտեսությունը:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում Հ. Հովհաննիսյանը ներկայացնում է Հայաստան՝ բյուզանդական դրամների ներթափանցման ուղիները: Թերևս առաջին անգամ հայ դրամագիտության մեջ X-XIII դարերի դրամաշրջանառության փուլային ուսումնասիրությունն արված է ավելի ընդարձակ պատմական համատեքստում: Դրա շնորհիվ հեղինակն առաջ է քաշում բոլորովին նոր մեկնաբանություն, ըստ որի X դարի վերջում XI դարի առաջին կեսում բյուզանդական դրամները Հայաստան են ներթափանցել հիմնականում բյուզանդական բանակների հետ միասին և պայմանավորված են ավելի ռազմական, քան առևտրական գործոնով: Այս խնդրի տրամաբանական շարունակությունն է 3.3 ենթագլուխը, որը քննում է բյուզանդական դրամների վերաշրջանառությունը XII-XIII դարերում: Չնայած ստեղծված բարդ քաղաքական իրավիճակին, երբ Հայաստանը բաժանված էր մահմեդական մանր իշխանությունների միջև, քաղաքների աննախադեպ աճ և առևտրական հարաբերությունների զարգացում է նկատվում: Հայաստանի քաղաքները որ միայն բարձրորակ տեղական արտադրանք են տալիս, այլև ներմուծում են բարձրարժեք ապրանքներ (խեցեղեն, ապակի, մետաղ), միաժամանակ իրենք էլ արտահանում են ապրանքներ, որոնք մեծ համբավ ունեին միջազգային շուկայում: Բնական է, որ նման պայմաններում զարգանում են ապրանքադրամային հարաբերությունները:

Այս ամենը նպաստում է դրամների աճին դրամաշրջանառության մեջ, որի արդյունքում սկսում են վերաշրջանառվել բյուզանդական դրամները, դրանց ընդօրինակությունները: Հատկապես հետաքրքիր է հեղինակի կողմից քննված՝ մուսուլմանական իշխանությունների մակադրոշմներով բյուզանդական XI դարի դրամների շրջանառության թեման: Այստեղ նա առաջ է քաշում կարևոր հարցադրումներ, որոնք հետագա ավելի խորը ուսումնասիրության ենթակա են, հատկապես, որ մակադրոշմների մեջ կան նաև հայատառ օրինակներ:

Այնուամենայնիվ կցանկանայինք անել որոշ դիտարկումներ, որոնք ունեն զուտ խորհրդատվական բնույթ:

1. Հ. Հովհաննիսյանի աշխատանքը լի է գիտական մի շարք կարևոր նորույթներով, որոնք, հաճախ, բավարար չափով բացված չեն, որի պատճառով հեղինակի միանգամայն համոզիչ գիտական փաստարկներն ասես տարրալուծվում են ընդհանուրի մեջ: Այսպես. ցանկալի կլիներ, որ Կոստանդին X-ի կողմից կայսեր անունով ֆոլիսների վերականգնման

հարցն առանձին զարգացում ստանար, ավելի հանգամանալից ներկայացվեր, քանի որ ատենախոսի տեսակետն այդ հարցում հիմնավորված ու տրամաբանական է և բոլորովին նոր լույս է սփռում դրամաշրջանառության պատմության վրա:

2. Ցանկալի կլիներ փոխել առաջին գլխի երկրորդ և երրորդ ենթագլուխների հերթականությունը՝ սկզբում ներկայացնելով այդ թեմայի ուսումնասիրության պատմությունը, հետո նոր անանուն ֆոլիսների թողարկման նախադրյալները և սկզբնավորումը:

3. Անդրադառնալով Խ. Մուշեղյանի տեսակետին, որ Անիում հայտնաբերված բյուզանդական դրամները թողարկվել են մայրաքաղաքում, նա իրավացիորեն նշում է, որ այդտեղ կարող էին թողարկվել միայն ընդօրինակությունները, բայց ոչ բոլոր դրամները: Սա շատ կարևոր դիտարկում է և կարելի էր ոչ թե տողատակում ներկայացնել, այլ հիմնական տեքստում՝ ավելի բացված, հատկապես, որ ատենախոսի առաջ քաշած թեզը առավել տրամաբանված է:

4. Հղումների մեջ կան մասեր, որոնք նույնպես կարելի էր տալ տեքստի մեջ: Օրինակ՝ հղում 280-ը՝ «Ֆոլիսների երկրորդ տիպը հաճախ հանդիպում է նախորդների վրա» կարելի էր տալ վերևում՝ որտեղ խոսվում է այդ տիպի մասին՝ «Երկրորդ տիպի ֆոլիսների դիմերեսին՝ Քրիստոսի, իսկ դարձերեսին՝ կայսեր կիսանդրիներն են» (էջ 99):

Թեման ուսումնասիրված է շատ բազմակողմանի, որտեղ մեկտեղված են աղբյուրագիտական տվյալներ, հնագիտական պեղածո հարուստ նյութը: Աշխատանքը, հատկապես, արժեքավոր է դառնում հեղինակի կողմից՝ հնագիտական նյութի ենթատեքստում ճիշտ օգտագործված վիմագրական տվյալների և ռճաբանական վերլուծության շնորհիվ, որոնք լրացնում են միջնադարյան պատմական աղբյուրների բացը: Հեղինակը ծանոթ է թե՛ Հայաստանի տարածքից՝ պեղածո և պատահական գտնված, թե տարածաշրջանի հարևան երկրներում հայտնաբերված բյուզանդական գրեթե ամբողջ դրամագիտական նյութին, որքան հնարավորություն են տալիս հրատարակությունները: Նա շատ դիպուկ նկատում է, որ, ցավոք առ այսօր մեզ անհասանելի է որևէ տեղեկատվություն արևմտյան Հայաստանի տարածքից հայտնաբերվող դրամական գտածոների մասին, բացառությամբ առանձին մի քանի դեպքերի, քանի որ դրանք Թուրքիայում չեն դառնում հաշվառման և կանոնավոր ուսումնասիրության առարկա:

Թեմայի վերաբերյալ ատենախոսն ընգրկել է մեծ թվով ուսումնասիրություններ, որոնք լիարժեք օգտագործելով, ներկայացրել է աշխատանքը՝ ընթերցողին մատուցելով դրամների տիպաբանության ուսումնասիրության կուռ մեթոդաբանություն, դրամագիտության տվյալները դարձնելով առավել կիրառական հատկապես Հայաստանի հնագիտական հուշարձանների թվագրության հարցում, որոնք բխում են տեղական պատմամշակութային առանձնահատկություններից: Այս ուսումնասիրությունը գիտական արժեքավոր դաշտ է ստեղծում՝ նորովի ընկալել հայ-բյուզանդական փոխառնչությունները միջնադարյան Հայաստանի տնտեսական, ռազմաքաղաքական, մշակույթի պատմության համատեքստում:

Ամփոփելով մեր խոսքը, նշենք, որ Հասմիկ Հովհաննիսյանի ատենախոսությունը, գիտական մեթոդներով հիմնավորված, լրացնում է միջնադարյան Հայաստանի դրամագիտության ուսումնասիրության մեջ առկա բացը՝ բյուզանդական դրամների հայաստանյան գտածոների տվյալների հիման վրա: Ներկայացված սեղմագիրը լիովին արտահայտում է ատենախոսության բովանդակությանը:

Հաշվի առնելով ատենախոսության գիտական արժեքը, պետք է ասել, որ այն միանգամայն համապատասխանում է 00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար գործող պահանջներին և Հասմիկ Սամվելի Հովհաննիսյանն արժանի է իր հայցած գիտական աստիճանի շնորհմանը:

10.05.2021 թ.

Ընդդիմախոս՝ Արմինե Զոհրաբյան
պատմ. գիտ. թեկնածու
Հայաստանի պատմության թանգարան
Հնագիտության բաժնի գիտաշխատող

Հաստատում եմ՝ Ն. Երանյան
պատմ. գիտ. թեկնածու
Հայաստանի պատմության թանգարան
գիտական գծով փոխտնօրեն